

Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

Կ Ա Ր Ծ Ի Ք
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄՈՒՄ՝
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԱԾԻՒՄԸ
ՍԵՎԱԿ ԱՐԹՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ

**ԺԲ.00.05-«Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճան եացելու համար ներկայացված Մելիք Արտաշեսի Մելիքյանի
«Հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում» թեմայով
առենախոսության վերաբերյալ**

Հանցագործության պրովոկացիան իր բարդ և ծավալուն էությանը հաստատուն տեղ է զբաղեցնում քրեական իրավունքում: Այն հարաբերակցվում է ինչպես քրեական իրավունքի մի շարք ինստիտուտների, այնպես էլ քրեական պատասխանատվություն սահմանող տարբեր նորմերի հետ տվյալ թեմայի վերաբերյալ հետազոտություն իրականացնեու անհրաժեշտության առումով սահմանելով հետաքրքրության ու կարևորության բարձր նիշ:

Արտասահմանյան երկրների տարբեր օրենսգրքերում առկա կարգավորումների, դոկտրինալ տեսակետերի, դատական պրակտիկայում ձևավորված իրավական դիրքորոշումների համակցմամբ հետազոտման օբյեկտի շուրջ առկա է հարուստ փորձ: Միաժամանակ, չնայած նշյալ նյութերի առատությանը հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ առկա են տարբեր ընկալումներ և մոտեցումներ, ինչը պայմանավորում է հետազոտության շրջանակի լայն սպեկտր:

Չնայած դրան, պետք է փաստել, որ ներպետական իրավունքում նկատելի է հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ ուսումնասիրությունների և առկա իրավական կարգավորման համեմատաբար նվազ մակարդակ, ինչը, նախորդ պարբերությամբ շարադրվածի պայմաններում, պահանջ է ստեղծում այդ մասով իրավունքի արդի գարգացումներին համահունչ կատարել անհրաժեշտ աշխատանքներ միտված հանրածանաչ և բարձր իրավական արժեք ներկայացնող իրավական աղբյուրներում առկա պահանջների հետ ներպետական օրենսդրության համապատասխանեցմանը:

Նման օրակարգի սահմանումը հատկապես կարևորվում է 2021 թվականի մայիսի 5-ին

ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում, ի թիվս այլնի, նաև հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ նորամուծությունների հետ:

Այսպիսով, ընտրված թեմայի ուսումնասիրության կարևորությունը, իրատապությունը, անհրաժեշտությունն ու արդիականությունը կասկած չի հարուցում:

Աշխատանքի կառուցվածքում պահպանվել է տրամաբանական հաջորդականությունը, այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված վեց պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Ներածությունում հեղինակի կողմից ցույց է տրվել ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվել հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, իրավական և փորձառական հիմքերը, հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը, հետազոտության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, առենախոսության արդյունքների փորձարկումը:

Առենախոտության առաջին գլխում հեղինակն անդրադարձել է պրովոկացիայի որպես սոցիալական կյանքի բաղադրատարրի հատկանիշներին, ներկայացրել դրա բնորոշիչ առանձնահատկությունները: Այնուհետև ուսումնասիրվել է հանցագործության պրովոկացիայի էությունը, դրա բաղդադրաբերը և բովանդակությունը:

Երկրորդ գլխում քննարկվել է Հանցագործության պրովոկացիայի իրավական կարգավորումը, որտեղ ուսումնասիրվել է հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ արտասահմանյան փորձը, ինչի լույսի ներքո ուսումնասիրվել է նաև ներպետական փորձը՝ կատարվելով համապատասխան փաստագրումներ: Բացի այդ, դիտարկվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված պրակտիկան և առանձնացվել այն չափորոշիչները, որոնցով արձանագրվում է հանցագործության պրովոկացիայի առկայությունը:

Երրորդ գլխում մի կողմից համեմատականներ են անցկացվել հանցագործության պրովոկացիայի և քրեափրավական մի շարք ինստիտուցիոնալ կառուցակարգերի մասնավորապես անհրաժեշտ պաշտպանության, քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների, հանցակցության, քրեական պատասխանատվությունից ազատող հիմքերի և պատժի վերաբերյալ կարգավորումների միջև, մյուս կողմից հետազոտվել են

առանձին հանցատեսակներում հանցագործության պրովոկացիայի առանձնահատկությունները: Կատարված հետազոտության արդյունքում ի հայտ են եկել որոշ հիմնախնդիրներ, օրենսդրական բացեր, ինչպես նաև լրամշակումներ կատարելու անհրաժեշտության մասին վկայող հանգամանքներ, որոնց շուրջ է հեղինակի կողմից առաջ են քաշվել գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ ու առաջարկներ, որոնց թվում նաև փաստարկվել է հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմ նախատեսելու կարիքը տրվելով դրա օրենսդրական սահմանումը:

Հարկ է ընդգծել, որ ընտրված թեմայի բարդության պայմաններում հեղինակի մոտ ստացվել է ներկայացնելի ինքնուրույն, բազմակողմանի, բովանդակալից և կարևոր աշխատանք, որը կատարվել է ներպետական և արտասահմանյան փորձի համակողմանի ուսումնասիրության, բազմաբնույթ գրականության, եմպիրիկ փորձի և այլ իրավական ռեսուրսների նպատակային և ներդաշնակված օգտագործմամբ:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշ նկատառումներ, որոնք կներկայացվեն ստորև.

1. Աշխատության 67-69-րդ էջերում հեղինակն, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դրույթին առ այն, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակը բացակայում է, եթե տեղի է ունեցել անհրաժեշտ պաշտպանության սադրում, այսինքն եթե անձին վնաս պատճառելու նպատակով պաշտպանվողը նրան դրդել է հակաֆրավական ոտնագություն կատարելու, փաստել է, որ ինքնին պրովոկացիայի առկայությամբ պայմանավորված անհրաժեշտ պաշտպանության վիճակը բացառելն արդարացված մոտեցում չէ և դրա լուծման նպատակով հանդես է եկել օրենսդրական լրամշակման առաջարկով շարադրելով այն:

Իր այդ տեսակետը հեղինակը հիմնավորել է այն հանգամանքով, որ պրովոկացիայի և դրա արդյունքում կատարված հակաֆրավական ոտնագության միջև համաշափության առկայության դեպքում միայն կարելի է խոսել անհրաժեշտ պաշտպանության բացակայության մասին, այսինքն հանցագործության պրովոկացիան անհրաժեշտ պաշտպանության վիճակն ի սպառ բացառող պարտադիր նախապայման հանդիսանալ չի կարող և ցանկացած դեպքում ենթակա է գնահատման կոնկրետ իրավիճակում առկա փաստական հանգամանքների համակցմամբ:

Արժնորելով արտահայտած տեսակետը և դրա գիտական հիմնավորվածությունը, այնուամենայնիվ, պետք է նշել, որ իրավական որոշակիության տեսանկյունից առաջարկված օրենսդրական լրացմամբ կամ դրա շուրջ տրված մեկնաբանություններում ցանկալի կլիներ, որ ընդգծվեին այն հիմնական չափորոշիչները, որոնց առկայությամբ հնարավոր կլիներ որոշել համափափության առկայությունը կամ բացակայությունը և չբավարվել միայն ներկայացվող այն օրինակով, երբ առողջության համար վտանգավոր պրովոկացիոն ուժնաձգությանը պատասխան է տրվում սառը զենքով առողջությանը ծանր վնաս հասցնելով:

2. Ատենախոսության 81-82-րդ էջերում հիմնավորումներ են ներկայացվել պրովոկացիայի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու անհրաժեշտության վերաբերյալ, ինչն ամփոփվել է այդ կապակցությամբ համապատասխան օրենսդրական լրացման սահմանումը տալով:

Նման առաջարկի անհրաժեշտությունը հեղինակը պայմանավորել է նրանով, որ հնարավոր չէ անտեսել այն հանգամանքը, որ հանցագործության պրովոկացիայի ազդեցությունը ցանկացած պարագայում հանցագործություն կատարելու վճռականություն առաջացնելու ազդեցիկ գործոն է և այն տեղավորվում է քրեական պատասխանատվությունից ազատելու համար առանձին հիմք հանդիսանալու ընդհանուր տրամաբանության մեջ:

Միաժամանակ, հեղինակը հանդես է եկել օրենսդրական լրացում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ փաստարկով և առաջարկել, որ պրովոկացիայի արդյունքում առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքի հետևանքով էական վնաս չի հասցվել քրեական օրենքով պաշտպանվող օբյեկտին, կամ վերջինս հատուցել է վնասը կամ այլ կերպ շտկել հանցագործությամբ պատճառված վնասը, ինչն առերևույթ համանման է գործուն զղաղու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի շարադրանքին:

Նման պայմաններում հարց է առաջանում, թե գործուն զղաղու դեպքում, արդյո՞ք հնարավոր չէ քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն ընձեռելնան պրովոկացիայի ազդեցությամբ հանցագործություն կատարելու իրավիճակներին և եթե ոչ՝ ապա ցույց տրվեին դրանց միջև առկա տարբերություններն ու միմյանց կլանելու անհնարինությունը, հատկապես այն պայմաններում, երբ հետազոտության առարկան աշխատանքի շրջանակներում հարաբերակցվել է քրեախրավական տարբեր ինստիտուտների

հետ:

3. Աշխատանքի 100-107-րդ եջերում քննարկման առարկա է դարձվել հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անհրաժեշտության հարցը:

Հեղինակն, արձանագրելով, որ հանցագործության պրովոկացիան ունի քրեական հակաբրավականության և հանրային վտանգավորության բարձր աստիճան և գործող քրեաբրավական կարգավորումներով հնարավոր չէ պատշաճ իրավական գնահատական տալ ու հակագործ դրա դեմ, հանդես է եկել հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմ նախատեսելու առաջարկով տալով նաև դրա օրենսդրական ձևակերպումը:

Այնուհետև հանցագործության պրովոկացիայի առանձին տարրերը դիտարկվել են՝ առանձին հանցակազմի մոդելով, ինչպես նաև առաջարկվել են դրա որակյալ տեսակները, որոնք են՝ հատուկ սուբյեկտների կողմից՝ օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ գաղտնի քննչական գործողության շրջանակներում, ինչպես նաև բոնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով արարքի կատարումը (1-ին մաս), ինչպես նաև արարքի կատարումը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք (2-րդ մաս):

Ներկայացված առաջարկի համատեքստում հարց է ծագում, թե այն դեպքերում, եթե պրովակատորի դիտավորությունն ուղղված է իրահրվող անձի կողմից ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի կատարմանը, արդյո՞ք վտանգավորության տեսանկյունից այն նույն հարթության մեջ պետք է գտնվի այն իրավիճակի հետ, եթե պրովակատորը ներգործությամբ դիտավորություն է ունենում անձին իրահրել ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարմանը, այսինքն առավել նպատակահարմար չէ՞ր լինի արդյոք հիշյալ իրավիճակները միմյանցից զատել և երկրորդ դեպքը դիտարկել որպես արարքը որակյալ դարձնող հանգամանք:

Վերը նշված նկատառումներն, այնուամենայնիվ, միայն բանավիճային բնույթ ունեն, դրանք չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները և չեն նվազեցնում առենախոսության գիտական մակարդակը: Հետազոտությունը կատարված է բարեխողորեն, հիմնավոր մեթոդաբանությամբ, իսկ դրա արդյունքներն ունեն գիտական և կիրառական

կարևոր նշանակություն, ատենախոսությունը բավարարում է ՀՀ Կառավարության թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սերմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսող

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ,

իրավաբանական գիտությունների թեկնածու  U. Պողոսյան

03.02.2025թ.

«Ս. Պողոսյանի ստորագրության իսկությունը հաստատում էմ»

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ

Ս. Պետրոսյան

